ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔ

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 25/2/4

19 դեկտեմբերի 2025 թվական

## ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 31 անդամներ:
Բացակա էին՝ Վարդան Ղուկասյանը, Սարիկ Մինասյանը
**Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝**
**Նիստը վարում էր համայնքի ղեկավարի առաջին տեղակալ՝ Ավետիս Առաքելյանը**
**Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Կարեն Մալխասյանը**

**ԼՍԵՑԻՆ**

***1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԵՐԿՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՉՈՐՐՈՐԴ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ (Զեկ. ԱՎԵՏԻՍ ԱՌԱՔԵԼՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու երկրորդ նստաշրջանի հերթական չորրորդ նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

***Քվեարկության արդյունքները.***

Կողմ -31 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Լ. ԱՆԱՆՅԱՆ
Ն. ՄԵՍՐՈՊՅԱՆ
Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Կ. ԼԱԼԱԶԱՐՅԱՆ
Ս. ԷԼԲԱԿՅԱՆ
Ս. ՄԵԼԻՔՅԱՆ
Վ. ՄԿՐՏՉՅԱՆ
Է. ԲԱՐՍԵՂՅԱՆ
Լ. ԱՆԱՆՅԱՆ
Ծ. ԱՐԱՄՅԱՆ
Ք. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Հ. ՄԱՆՈՒԿՅԱՆ
Է. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Գ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Ա. ՀԱԿՈԲՅԱՆ
Ն. ԲԵԳԶԱԴՅԱՆ
Ա. ԲԵՅԲՈՒՏՅԱՆ
Վ. ԴԱՎԹՅԱՆ
Լ. ՆԱԶԱՐՅԱՆ
Ս. ԱԴԱՄՅԱՆ
Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ
Լ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

Կ. ԳՐԻԳՈՐՅԱՆ
Վ. ԵԴԻԳԱՐՅԱՆ
Ա. ՀՈՎՍԵՓՅԱՆ
Ռ. ՄԽԻԹԱՐՅԱՆ
Վ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ
Ս. ՄՈՍՈՅԱՆ
Կ. ՍԻՄՈՆՅԱՆ
Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 158-Ա)*

---

**<u>ԼՍԵՑԻՆ</u>**

***2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԱՆԻ ՄԿՐՏՉՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ և 19-րդ կետերի, «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ, 14-րդ, 15-րդ հոդվածների և 16-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի, «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» օրենքի 14-րդ հոդվածի, «Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական վճարի և վարչական վարույթի առանձնահատկությունների մասին»օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի և «Անասնաբուժության մասին» օրենքի 3-րդհոդվածի 1-ինմասի 19-րդ կետիդրույթներով՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի վարչական տարածքում տեղական տուրքերի և վճարների 2026 թվականի տեսակները և դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշմամբ հաստատված հավելվածի 1-ին կետի 1-ին ենթակետի «ա» պարբերությամբ, 3-րդ կետի 1-ին ենթակետով և 4-րդ կետով, 5-րդ կետի 1-ին և 2–րդ ենթակետերով, 6-րդ կետով, 7-րդ կետով, 9-րդ կետով, 10-րդ կետի 1-ին, 2-րդ, 6-րդ ենթակետերով, 11-րդ կետի 1-ին ենթակետի «բ»-«գ» պարբերություններով, 2-րդ ենթակետի «ա»-«գ» պարբերություններով, 13-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով, 14-րդ կետով, 16-րդ կետով, 18-րդ կետի 1-ին ենթակետով, 20-րդ կետով սահմանված դրույքաչափերը հաշվարկել՝ կիրառելով 1.5 գործակից:
3. Շինարարության թույլտվության ժամկետները շինարարության թույլտվությամբ սահմանված՝ շինարարության ժամկետի մինչև 20 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան մեկ տարի ժամկետով առաջին անգամ երկարաձգելու դեպքում սույն որոշմամբ հաստատված հավելվածի2-րդ կետով սահմանված տեղական տուրքի դրույքաչափը հաշվարկվում է 0.5 գործակցի կիրառմամբ: Շինարարության թույլտվության ժամկետների հաջորդ երկարաձգումների դեպքում (անկախ երկարաձգվող ժամկետների տևողությունից) շինարարության թույլտվության երկարաձգման համար տեղական տուրքը հաշվարկվում է սույն որոշմամբ հաստատված հավելվածի 2-րդ կետով սահմանված դրույքաչափերով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Վ.Մկրտչյանը ելույթ ունեցավ նախագծի վերաբերյալ և մատնանշեց, որ դեռ վաղ է այս նախագծում տեղ գտած փոփոխությունները կիրառելու համար: Հարցի քննարկման համար հայտարարվեց ընդմիջում:

Ընդմիջումից հետո Ռ.Մխիթարյանի առաջարկությամբ հեղինակի կողմից օրակարգից հանվեցին նախագծի հետ ուղղակի կապ ունեցող 14-15-րդ հարցերը՝ հետագայում ավելի հանգամանորեն քննարկելու նպատակով:

Ավտոկայանատեղիների նոր դրույքաչափը կիրառելի չի լինի մինչև 14-15-րդ հարցերը առաջիկայում նորից քննարկվեն: Լիզա Գասպարյանն իրենց խմբակցության անունից միացավ առաջարկին, իսկ Այնուհետև հարցը դրվեց քվեարկության:

***Քվեարկության արդյունքները.***

Կողմ -18 Դեմ -13 Ձեռնպահ -0

Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Լ. ԱՆԱՆՅԱՆ
Ն. ՄԵՍՐՈՊՅԱՆ
Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Կ. ԼԱԼԱԶԱՐՅԱՆ
Ս. ԷԼԲԱԿՅԱՆ
Ս. ՄԵԼԻՔՅԱՆ
Ս. ԱԴԱՄՅԱՆ
Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ
Լ. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Կ. ԳՐԻԳՈՐՅԱՆ
Վ. ԵԴԻԳԱՐՅԱՆ
Ա. ՀՈՎՍԵՓՅԱՆ
Ռ. ՄԽԻԹԱՐՅԱՆ
Վ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ
Ս. ՄՈՍՈՅԱՆ
Կ. ՍԻՄՈՆՅԱՆ
Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ
Վ. ՄԿՐՏՉՅԱՆ
Է. ԲԱՐՍԵՂՅԱՆ
Լ. ԱՆԱՆՅԱՆ
Շ. ԱՐԱՄՅԱՆ
Ք. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Հ. ՄԱՆՈՒԿՅԱՆ
Է. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Գ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Ա. ՀԱԿՈԲՅԱՆ
Ն. ԲԵԳՋԱԴՅԱՆ
Ա. ԲԵՅԲՈՒՏՅԱՆ
Վ. ԴԱՎԹՅԱՆ
Լ. ՆԱԶԱՐՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 159-Ն)*

---

Ելույթի իրավունք խնդրեց Կ.Սիմոնյանը և անդրադարձավ ոչ օլիմպիական մարզաձևերի չեմպիոն դարձած մարզիկների պարգևատրման հարցին:

**<u>ԼՍԵՑԻՆ</u>**

***3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԱԼՎԱՐԴ ՀԱԿՈԲՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 32-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներով՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզիԳյումրի համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2026 թվականի բյուջեն՝ համաձայն հավելվածի, ծախսերի և եկամուտների հետևյալ հաշվեկշռվածությամբ՝
1) եկամուտներ՝ 7 582 105,5 (յոթ միլիարդ հինգ հարյուր ութսուներկու միլիոն մեկ հարյուր հինգ հազար հինգ հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ,
2) ծախսեր՝ 7 582 105,5 (յոթ միլիարդ հինգ հարյուր ութսուներկու միլիոն մեկ հարյուր հինգ հազար հինգ հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ :

2. Սահմանել որ՝ Համայնքի ղեկավարը համայնքի 2026 թվականի բյուջեի կատարման ընթացքում կարող է կատարել վերաբաշխումներ բյուջեով հաստատված հատկացումների ընդհանուր գումարի 10%-ի սահմաններում, սույն որոշումով հաստատված ծախսերի գործառական դասակարգման առանձին խմբերի և ենթախմբերի, ինչպես նաև ենթախմբերի ներսում, այն պայմանով, որ թույլ չտրվի սույն որոշմամբ յուրաքանչյուր ենթախմբի գծով նախատեսված հատկացումների կրճատում ոչ ավել, քան 20%-ի չափով կամ ավելացում 35%-ից ավելի չափով:

3.Թույլատրել համայնքի ղեկավարին սույն որոշմամբ հաստատված հատկացումների սահմաններում.
1) համայնքի ավագանու մշտական գործող համապատասխան հանձնաժողովի ներկայացմամբ հաստատել սոցիալական ծրագրերով նախատեսված ծառայությունների և շահառուների ցանկն ու կազմակերպել վճարումների կատարումը,
2) բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման այլ ծախսերի (միջոցառումների կազմակերպում), նվիրատվությունների և սուբսիդիաների համար նախատեսված հոդվածներով հատկացումների վերծանումը և ծախսերի իրականացումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2026 թվականի հունվարի 01-ից:

Հնչեցին բազմաթիվ հարցեր:

ելույթ ունեցավ Էմմա Բաղդասարյանը՝ 2026թ. բյուջեում կանաչապատման հարցին մակերեսորեն մոտենալու վերաբերյալ:

***Քվեարկության արդյունքները.***

Կողմ -18
Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Լ. ԱՆԱՆՅԱՆ
Ն. ՄԵՍՐՈՊՅԱՆ
Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Կ. ԼԱԼԱԶԱՐՅԱՆ
Ս. ԷԼԲԱԿՅԱՆ
Ս. ՄԵԼԻՔՅԱՆ
Ս. ԱԴԱՄՅԱՆ
Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ
Լ. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Կ. ԳՐԻԳՈՐՅԱՆ
Վ. ԵԴԻԳԱՐՅԱՆ
Ա. ՀՈՎՍԵՓՅԱՆ
Ռ. ՄԽԻԹԱՐՅԱՆ
Վ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ
Ս. ՄՈՍՈՅԱՆ
Կ. ՍԻՄՈՆՅԱՆ
Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Դեմ -12
Վ. ՄԿՐՏՉՅԱՆ
Է. ԲԱՐՍԵՂՅԱՆ
Լ. ԱՆԱՆՅԱՆ
Ճ. ԱՐԱՄՅԱՆ
Ք. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Հ. ՄԱՆՈՒԿՅԱՆ
Գ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Ա. ՀԱԿՈԲՅԱՆ
Ն. ԲԵԳԶԱԴՅԱՆ
Ա. ԲԵՅԲՈՒՏՅԱՆ
Վ. ԴԱՎԹՅԱՆ
Լ. ՆԱԶԱՐՅԱՆ

Ձեռնպահ -0

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 160-Ն)*

---

**ԼՍԵՑԻՆ**

***4. ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԱԼՎԱՐԴ ՀԱԿՈԲՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4.1 կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից սահմանված տարեկան աշխատանքային պլանների կազմման ուղեցույցը՝ **Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2026 թվականի տարեկան աշխատանքային պլանը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

***Քվեարկության արդյունքները.***

Կողմ -18
Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Լ. ԱՆԱՆՅԱՆ
Ն. ՄԵՍՐՈՊՅԱՆ
Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Կ. ԼԱԼԱԶԱՐՅԱՆ
Ս. ԷԼԲԱԿՅԱՆ
Ս. ՄԵԼԻՔՅԱՆ
Ս. ԱԴԱՄՅԱՆ
Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ
Լ. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Կ. ԳՐԻԳՈՐՅԱՆ
Վ. ԵԴԻԳԱՐՅԱՆ
Ա. ՀՈՎՍԵՓՅԱՆ
Ռ. ՄԽԻԹԱՐՅԱՆ

Դեմ -11
Վ. ՄԿՐՏՉՅԱՆ
Է. ԲԱՐՍԵՂՅԱՆ
Լ. ԱՆԱՆՅԱՆ
Ճ. ԱՐԱՄՅԱՆ
Ք. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Հ. ՄԱՆՈՒԿՅԱՆ
Է. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Գ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Ն. ԲԵԳԶԱԴՅԱՆ
Վ. ԴԱՎԹՅԱՆ
Լ. ՆԱԶԱՐՅԱՆ

Ձեռնպահ -0

Վ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ
Ս. ՄՈՍՈՅԱՆ
Կ. ՍԻՄՈՆՅԱՆ
Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 161-Ա)*

---

**ԼՍԵՑԻՆ**

***5. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ <<ԳՅՈՒՄՐՈՒ ԱՎՏՈԲՈՒՍ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐՎԱԾ ԱՎՏՈԲՈՒՍՆԵՐԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ***
***(Զեկ. ԱԼՎԱՐԴ ՀԱԿՈԲՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» օրենքի 1-ին հոդվածի 1-ին կետով `**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականությունն հանդիսացող «Գյումրու ավտոբուս» փակ բաժնետիրական ընկերությանն անհատույց օգտագործման տրված ավտոբուսների պարտադիր ապահովագրության նպատակով հատկացնել 9 750 000 (ինը միլիոն յոթ հարյուր հիսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:
2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2025 թվականի բյուջեի 1/1/1 գործառական դասակարգման (4215) «Ապահովագրական ծախսեր» տնտեսագիտական դասակարգման հոդվածից օրենքով սահմանված կարգով:
3. Սույ որոշման 1-ին կետում նշված գումարը հատկացնել «Գյումրու ավտոբուս» փակ բաժնետիրական ընկերության կողմից Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2025 թվականի բյուջե մուտքագրելուց հետո:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

***Քվեարկության արդյունքները.***

Կողմ -28 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Լ. ԱՆԱՆՅԱՆ
Ն. ՄԵՍՐՈՊՅԱՆ
Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Կ. ԼԱԼԱԶԱՐՅԱՆ
Ս. ԷԼԲԱԿՅԱՆ
Ս. ՄԵԼԻՔՅԱՆ
Վ. ՄԿՐՏՉՅԱՆ
Է. ԲԱՐՍԵՂՅԱՆ
Լ. ԱՆԱՆՅԱՆ
Ծ. ԱՐԱՄՅԱՆ
Ք. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Հ. ՄԱՆՈՒԿՅԱՆ
Է. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Գ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Ն. ԲԵԳԶԱԴՅԱՆ
Վ. ԴԱՎԹՅԱՆ
Լ. ՆԱԶԱՐՅԱՆ
Ս. ԱԴԱՄՅԱՆ
Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ
Լ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

Կ. ԳՐԻԳՈՐՅԱՆ
Վ. ԵԴԻԳԱՐՅԱՆ
Ա. ՀՈՎՍԵՓՅԱՆ
Ռ. ՄԽԻԹԱՐՅԱՆ
Վ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ
Ս. ՄՈՍՈՅԱՆ
Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 162-Ա)*

---

**ԼՍԵՑԻՆ**

***6. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԹՎՈՎ 2 ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԱԼՎԱՐԴ ՀԱԿՈԲՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 06-ի N-119-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 10-րդ և 11-րդ կետերի դրույթներով և հինգ համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների գրություններն՝ ուղղված համայնքի ղեկավարին (Գյումրու համայնքապետարան մուտքագրված՝ 2025 հոկտեմբերի30-ին N 16771 և դեկտեմբերի 09-ինN 19034թվագրություններով).**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1.Համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին ընթացիկ վերանորոգման և գույքի ձեռքբերմաննպատակով, որպես նվիրատվություն հատկացնել 821 600 (ութ հարյուր քսանմեկ հազար վեց հարյուր) Հայաստանի Հանրապետությանդրամ՝ համաձայն հավելվածի:

2.ՀանձնարարելԳյումրու համայնքապետարանիաշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստին սույն որոշման1-ին կետում նշված գումարների հատկացումը կատարելՀայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2025 թվականի 8/2/2 և9/6/1 գործառական(4819) «Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին»տնտեսագիտական դասակարգմանհոդվածից՝օրենքով սահմանված կարգով՝ համաձայն հավելվածի:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կազմակերպությունների տնօրեններին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

***Քվեարկության արդյունքները.***

Կողմ -26 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Լ. ԱՆԱՆՅԱՆ
Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Կ. ԼԱԼԱԶԱՐՅԱՆ
Ս. ԷԼԲԱԿՅԱՆ
Ս. ՄԵԼԻՔՅԱՆ
Վ. ՄԿՐՏՉՅԱՆ
Է. ԲԱՐՍԵՂՅԱՆ
Լ. ԱՆԱՆՅԱՆ
Շ. ԱՐԱՄՅԱՆ
Ք. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Հ. ՄԱՆՈՒԿՅԱՆ
Է. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Գ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Ն. ԲԵԳԶԱԴՅԱՆ
Վ. ԴԱՎԹՅԱՆ
Լ. ՆԱԶԱՐՅԱՆ
Ս. ԱԴԱՄՅԱՆ
Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

Լ. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Կ. ԳՐԻԳՈՐՅԱՆ
Վ. ԵԴԻԳԱՐՅԱՆ
Ա. ՀՈՎՍԵՓՅԱՆ
Ռ. ՄԽԻԹԱՐՅԱՆ
Ս. ՄՈՍՈՅԱՆ
Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 163-Ա)*

---

**ԼՍԵՑԻՆ**

***7. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ՄՈՒՇ» ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ***
***(Զեկ. ԱՎԵՏԻՍ ԱՌԱՔԵԼՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, հիմք ընդունելով Գյումրի համայնքի ղեկավարին փոխարինող Ավետիս Առաքելյանի և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի «Մուշ» զարգացման կենտրոն» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ կենտրոն) տնօրեն Աննա Սահակյանի միջև 2025 թվականի նոյեմբերի 01-ին կնքված փոխըմբռնման հուշագիրը և կենտրոնի տնօրենի գրությունը՝ ուղղված Գյումրի համայնքի ղեկավարին, (Գյումրու համայնքապետարան մուտքագրված 2025 թվականի հոկտեմբերի 08-ին N 15525 թվագրությամբ)՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.

1. Կենտրոնի հետագա գործունեության շարունակականությունը ապահովելու նպատակով որպես նվիրատվություն հատկացնել 23 982 072 (քսաներեք միլիոն ինը հարյուր ութսուներկու հազար յոթանասուներկու) Հայաստանի Հանրապետության դրամ հաստիքների տարեկան ֆինանսավորման համար (կենտրոնի աշխատակիցների աշխատավարձի վճարում):

2. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստին սույն որոշման 1-ին կետում նշված գումարներ հատկացումը կատարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2026 թվականի բյուջեի 9/6/1 գործառական (4819) «Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կենտրոնի տնօրենին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

***Քվեարկության արդյունքները.***

Կողմ -27 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Լ. ԱՆԱՆՅԱՆ
Ն. ՄԵՍՐՈՊՅԱՆ
Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Կ. ԼԱԼԱԶԱՐՅԱՆ
Ս. ԷԼԲԱԿՅԱՆ
Ս. ՄԵԼԻՔՅԱՆ
Վ. ՄԿՐՏՉՅԱՆ
Է. ԲԱՐՍԵՂՅԱՆ
Լ. ԱՆԱՆՅԱՆ
Ճ. ԱՐԱՄՅԱՆ
Ք. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Հ. ՄԱՆՈՒԿՅԱՆ
Է. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Գ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Ն. ԲԵԳԶԱԴՅԱՆ
Վ. ԴԱՎԹՅԱՆ

Լ. ՆԱԶԱՐՅԱՆ
Ս. ԱԴԱՄՅԱՆ
Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ
Լ. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Կ. ԳՐԻԳՈՐՅԱՆ
Վ. ԵԴԻԳԱՐՅԱՆ
Ա. ՀՈՎՍԵՓՅԱՆ
Ռ. ՄԽԻԹԱՐՅԱՆ
Ս. ՄՈՍՈՅԱՆ
Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 164-Ա)*

---

**ԼՍԵՑԻՆ**

***8. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ԳՅՈՒՄՐՈՒ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԳՈՒՅՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***
***(Զեկ. ԱԼՎԱՐԴ ՀԱԿՈԲՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետերով՝**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է**.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի «Գյումրու կոմունալ ծառայություն» փակ բաժնետիրական ընկերությանն անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել ՎԱԶ 21121 մակնիշի 216SO45 պետհամարանիշի ծառայողական ավտոմեքենան:
2. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ օրենքով սահմանված կարգով կատարել սույն որոշման 1-ին կետում նշված ընկերությանն անհատույց օգտագործման իրավունքով տրամադրվող գույքի հաշվապահական ձևակերպումները:
3. Անհատույց օգտագործման իրավունքով տրամադրվող գույքի հետ կապված գործընթացի կազմակերպումը վերապահել սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի ընդունած իրավական ակտով ստեղծվելիք հանձնաժողովին
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

***Քվեարկության արդյունքները.***

Կողմ -27 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Լ. ԱՆԱՆՅԱՆ
Ն. ՄԵՍՐՈՊՅԱՆ
Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Կ. ԼԱԼԱԶԱՐՅԱՆ
Ս. ԷԼԲԱԿՅԱՆ
Ս. ՄԵԼԻՔՅԱՆ
Վ. ՄԿՐՏՉՅԱՆ
Է. ԲԱՐՍԵՂՅԱՆ
Լ. ԱՆԱՆՅԱՆ
Շ. ԱՐԱՄՅԱՆ
Ք. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Հ. ՄԱՆՈՒԿՅԱՆ
Է. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Գ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Ն. ԲԵԳԶԱԴՅԱՆ
Վ. ԴԱՎԹՅԱՆ
Լ. ՆԱԶԱՐՅԱՆ
Ս. ԱԴԱՄՅԱՆ

Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ
Լ. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Կ. ԳՐԻԳՈՐՅԱՆ
Վ. ԵԴԻԳԱՐՅԱՆ
Ա. ՀՈՎՍԵՓՅԱՆ
Ռ. ՄԽԻԹԱՐՅԱՆ
Ս. ՄՈՍՈՅԱՆ
Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 165-Ա)*

---

**ԼՍԵՑԻՆ**

***9. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 283-Ա ՈՐՈՇՈՒՄՆՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ***
***(Զեկ. ԱԼՎԱՐԴ ՀԱԿՈԲՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1–ին մասի 28-րդ կետի,«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 37-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով՝Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզիԳյումրիհամայնքիավագանին որոշում է.

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների (այսուհետ՝ Կազմակերպություններ) աշխատողների հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը՝ ըստ ոլորտների.
1) սպորտի՝ թվով 15 համաձայն NN 1-15 հավելվածների,
2) մշակույթ՝ թվով 18 համաձայն NN 16-32 հավելվածների,
3) կրթության՝ թվով 24 համաձայն NN 33-57 հավելվածների:
2. Կազմակերպությունների տարիֆիկացիաների հաստատումը վերապահել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին:
3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքիհամայնքային ոչ առևտրային կազմակերպություններիաշխատողների քանակը, պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Գյումրու համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 27-ի N 282-Ա որոշումն կորցրած ճանաչելու մասին»N 283-Ա որոշումը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2026 թվականի հունվարի 1-ից:

***Քվեարկության արդյունքները.***

Կողմ -27 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Լ. ԱՆԱՆՅԱՆ
Ն. ՄԵՍՐՈՊՅԱՆ
Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Կ. ԼԱԼԱԶԱՐՅԱՆ
Ս. ԷԼԲԱԿՅԱՆ
Ս. ՄԵԼԻՔՅԱՆ
Վ. ՄԿՐՏՉՅԱՆ
Է. ԲԱՐՍԵՂՅԱՆ
Լ. ԱՆԱՆՅԱՆ
Շ. ԱՐԱՄՅԱՆ
Ք. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Հ. ՄԱՆՈՒԿՅԱՆ
Է. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Գ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Ն. ԲԵԳԶԱԴՅԱՆ
Վ. ԴԱՎԹՅԱՆ

Լ. ՆԱԶԱՐՅԱՆ
Ս. ԱԴԱՄՅԱՆ
Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ
Լ. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Կ. ԳՐԻԳՈՐՅԱՆ
Վ. ԵԴԻԳԱՐՅԱՆ
Ա. ՀՈՎՍԵՓՅԱՆ
Ռ. ՄԽԻԹԱՐՅԱՆ
Ս. ՄՈՍՈՅԱՆ
Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 166-Ա)*

---

**ԼՍԵՑԻՆ**

***10. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 22-Ի N 169-Ն ՈՐՈՇՄԱՆ 3-ՐԴ ԿԵՏԸ, 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 22-Ի N 105-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ՍՅՈՒԶԱՆՆԱ ՎԱՐԴԵՎԱՆՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 6-րդ մասով , 37-րդ հոդվածի 1-ին մասով՝ համայնքի ավագանին ո ր ո շ ու մ է.

1. Ուժը կորցրած ճանաչել 2012 թվականի նոյեմբերի 22-ի ««Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկ ստեղծելու, «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին» N 169-Ն որոշման 3-րդ կետը և 2022 թվականի հունիսի 22-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2012 թվականի նոյեմբերի 22-ի N 169-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու, Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատողների քանակը, հաստիքացուցակը, պաշտոնային դրույքաչափերը հաստատելու, Գյումրի համայնքի ավագանու 2022 թվականի մայիսի 11-ի N 80-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 105-Ա որոշումը:

2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը՝ համաձայն N 1 հավելվածի:

3. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն N 2 հավելվածի:

4. Առաջարկել Գյումրի համայնքի ղեկավարին փոխարինողին՝ համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ կամ լրացումներ կատարելու նպատակով, սահմանված կարգով դիմել ՀՀ կառավարության լիազորված պետական կառավարման մարմին՝ համաձայն N 3 հավելվածի:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2026 թվականի հունվարի 1-ից, իսկ բաժնի անվանափոխության, համայնքային ծառայողների թվաքանակի փոփոխությունների հետ կապված համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխությունների մասով (հավելված N 3)՝ Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի կողմից ընդունվելիք իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից:

***Քվեարկության արդյունքները.***

Կողմ -26　　　　Դեմ -0　　　　Ձեռնպահ -0

Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Լ. ԱՆԱՆՅԱՆ
Ն. ՄԵՍՐՈՊՅԱՆ
Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կ. ԼԱԼԱԶԱՐՅԱՆ
Ս. ԷԼԲԱԿՅԱՆ
Ս. ՄԵԼԻՔՅԱՆ
Է. ԲԱՐՍԵՂՅԱՆ
Լ. ԱՆԱՆՅԱՆ
Շ. ԱՐԱՄՅԱՆ
Ք. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Է. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Գ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Ն. ԲԵԳԶԱԴՅԱՆ
Վ. ԴԱՎԹՅԱՆ
Լ. ՆԱԶԱՐՅԱՆ
Ս. ԱԴԱՄՅԱՆ
Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ
Լ. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Կ. ԳՐԻԳՈՐՅԱՆ
Վ. ԵԴԻԳԱՐՅԱՆ
Ա. ՀՈՎՍԵՓՅԱՆ
Ռ. ՄԽԻԹԱՐՅԱՆ
Վ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ
Ս. ՄՈՍՈՅԱՆ
Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 167-Ա)*

---

**<u>ԼՍԵՑԻՆ</u>**

***11. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 5-Ի №56-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (Զեկ. ԱԼՎԱՐԴ ՀԱԿՈԲՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28 կետի և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, 3-րդ մասի, 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի դրույթներով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2017 թվականի մայիսի 5-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի «Գյումրու կոմունալ ծառայություն» համայնքային բյուջետային հիմնարկ ստեղծելու, կանոնադրությունը, ամրացվող գույքի կազմը, աշխատողների քանակը, հաստիքացուցակը, պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարի թեկնածությանը համաձայնություն տալու մասին» №56-Ա որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1)որոշման 4-րդ կետով հաստատված հավելված №3-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2026 թվականի հունվարի 01-ից:

***Քվեարկության արդյունքները.***

Կողմ -27 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Լ. ԱՆԱՆՅԱՆ
Ն. ՄԵՍՐՈՊՅԱՆ
Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Կ. ԼԱԼԱԶԱՐՅԱՆ
Ս. ԷԼԲԱԿՅԱՆ
Ս. ՄԵԼԻՔՅԱՆ
Է. ԲԱՐՍԵՂՅԱՆ
Լ. ԱՆԱՆՅԱՆ

Շ. ԱՐԱՄՅԱՆ
Ք. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Հ. ՄԱՆՈՒԿՅԱՆ
Է. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Գ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Ն. ԲԵԳՋԱԴՅԱՆ
Վ. ԴԱՎԹՅԱՆ
Լ. ՆԱԶԱՐՅԱՆ
Ս. ԱԴԱՄՅԱՆ
Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ
Լ. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Կ. ԳՐԻԳՈՐՅԱՆ
Վ. ԵԴԻԳԱՐՅԱՆ
Ա. ՀՈՎՍԵՓՅԱՆ
Ռ. ՄԽԻԹԱՐՅԱՆ
Վ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ
Ս. ՄՈՍՈՅԱՆ
Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 168-Ա)*

---

**ԼՍԵՑԻՆ**

***12. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՇՐՋԻԿ ԱՌԵՎՏՐԻ ԿԵՏԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆՆԵՐԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՇՐՋԻԿ ԱՌԵՎՏՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ՎԱՅՐԵՐԸ, ԴՐԱՆՑ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ (ՀԱՏԿԱՑՄԱՆ) ԿԱՐԳԸ, ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԵՐԸ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՎԱՃԱՌՎՈՂ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԿԱՄ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՉԹՈՒՅԼԱՏՐՎՈՂ ՏԵՍԱԿՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ***
***(Զեկ. ԱՆԻ ՄԿՐՏՉՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 41.7-րդ կետի, «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքի 5.2-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներով՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի վարչական տարածքում շրջիկ առևտրի կետերին ներկայացվող պահանջները, պայմանները, շրջիկ առևտրի իրականացման թույլատրելի վայրերը, դրանց տրամադրման (հատկացման) կարգը, ժամկետները, պայմանները և գործունեության իրականացման ժամերը, ինչպես նաև վաճառվող ապրանքների կամ մատուցվող ծառայությունների չթույլատրվող տեսակները՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

***Քվեարկության արդյունքները.***

Կողմ -26 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Լ. ԱՆԱՆՅԱՆ
Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Կ. ԼԱԼԱԶԱՐՅԱՆ
Ս. ԷԼԲԱԿՅԱՆ
Ս. ՄԵԼԻՔՅԱՆ
Է. ԲԱՐՍԵՂՅԱՆ
Լ. ԱՆԱՆՅԱՆ
Շ. ԱՐԱՄՅԱՆ
Ք. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Հ. ՄԱՆՈՒԿՅԱՆ
Է. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Գ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Ն. ԲԵԳՋԱԴՅԱՆ

Վ. ԴԱՎԹՅԱՆ
Լ. ՆԱԶԱՐՅԱՆ
Ս. ԱԴԱՄՅԱՆ
Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ
Լ. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Կ. ԳՐԻԳՈՐՅԱՆ
Վ. ԵԴԻԳԱՐՅԱՆ
Ա. ՀՈՎՍԵՓՅԱՆ
Ռ. ՄԽԻԹԱՐՅԱՆ
Վ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ
Ս. ՄՈՍՈՅԱՆ
Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 169-Ն)*

---

**<u>ԼՍԵՑԻՆ</u>**

***13. ՇՐՋԻԿ ԱՌԵՎՏՐԻ ԿԵՏԵՐԸ ԿԱՄ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ՀԱՏՈՒԿ ՏԱՐԱԾՔ ՏԵՂԱՓՈԽԵԼՈՒ, ԴՐԱՆՔ ԱՅՆՏԵՂ ՀԱՇՎԱՌԵԼՈՒ ԿԱՐԳԸ ԵՎ ՇՐՋԻԿ ԱՌԵՎՏՐԻ ԿԵՏԵՐԸ ԿԱՄ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ՀԱՏՈՒԿ ՏԱՐԱԾՔ ՏԵՂԱՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՊԱՀՊԱՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՎՃԱՐՆԵՐԻ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ***
***(Զեկ. ԱՆԻ ՄԿՐՏՉՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 41.8-րդ կետի, «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքի 5.3-րդ հոդվածի 6-րդ, 7-րդ մասերի դրույթներով՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.

1. Սահմանել շրջիկ առևտրի կետերը կամ տրանսպորտային միջոցները հատուկ տարածք տեղափոխելու, դրանք այնտեղ հաշվառելու կարգը և շրջիկ առևտրի կետերը կամ տրանսպորտային միջոցները հատուկ տարածք տեղափոխելու և պահպանելու համար վճարների չափը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

***Քվեարկության արդյունքները.***

Կողմ -26 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Լ. ԱՆԱՆՅԱՆ
Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Կ. ԼԱԼԱԶԱՐՅԱՆ
Ս. ԷԼԲԱԿՅԱՆ
Ս. ՄԵԼԻՔՅԱՆ
Է. ԲԱՐՍԵՂՅԱՆ
Լ. ԱՆԱՆՅԱՆ
Ծ. ԱՐԱՄՅԱՆ
Ք. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Հ. ՄԱՆՈՒԿՅԱՆ
Է. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Գ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Ն. ԲԵԳԶԱԴՅԱՆ
Վ. ԴԱՎԹՅԱՆ
Լ. ՆԱԶԱՐՅԱՆ
Ս. ԱԴԱՄՅԱՆ
Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ
Լ. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Կ. ԳՐԻԳՈՐՅԱՆ
Վ. ԵԴԻԳԱՐՅԱՆ
Ա. ՀՈՎՍԵՓՅԱՆ
Ռ. ՄԽԻԹԱՐՅԱՆ

Վ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

Ս. ՄՈՍՈՅԱՆ

Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 170-Ն)*

---

**ԼՍԵՑԻՆ**

***14. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 18-Ի N 72-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԱՆԻ ՄԿՐՏՉՅԱՆ)***

**ԼՍԵՑԻՆ**

***15. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 29-Ի N 79-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԱՆԻ ՄԿՐՏՉՅԱՆ)***

Օրակարգի 14-15-րդ հարցերը հեղինակի կողմից հանվեցին օրակարգից՝ հետագայում ավելի իրազեկված և ամփոփ ներկայացնելու պայմանով:

**ԼՍԵՑԻՆ**

***16. ՆԱԶԱՐԵԹ ՖԱՅԵՆԲԵՐԳԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍ ԱՄՍԻՑ ՄԻՆՉԵՎ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐ ԱՄԻՍԸ ՆԵՐԱՌՅԱԼ ԸՆԿԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ՄԱՅՐ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԵՎ ՏՈՒՅԺԵՐԻ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ՇՈՒՌԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ)***

Նազարեթ Ֆայենբերգի Հովհաննիսյանը դիմել է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին փոխարինողին՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող «ԲԻԷՄԴԱԲԼՅՈՒ ԻՔՍ 5 4.4 Ի» («BMW X5 4.4 I») մակնիշի, 07 DD 771 հաշվառման համարանիշով տրանսպորտային միջոցի (այսուհետ՝ տրանսպորտային միջոց) գույքահարկի 2018 թվականի մայիս ամսից մինչև 2025 թվականի դեկտեմբեր ամիսը ներառյալ ընկած ժամանակաշրջանի մայր գումարների և տույժերի վճարումների նկատմամբ արտոնություն սահմանելու խնդրանքով:
Տրանսպորտային միջոցը, որը սեփականության իրավունքով պատկանում է Նազարեթ Ֆայենբերգի Հովհաննիսյանին, 2018 թվականի մայիս ամսին Ռուսաստանի Դաշնությունում վթարի է ենթարկվել, որի պատճառով դարձել է հետագա շահագործման համար ոչ պիտանի և խոտանվել է 2018 թվականի հուլիսի 27-ին Ռուսաստանի Դաշնությունում (հիմք՝ տրանսպորտային միջոցը որպես թափոն ընդունման-հանձնման ակտ N 17, տրված 2018 թվականի հուլիսի 25-ին, N 011542905 վկայականը՝ Նազարեթ Ֆայենբերգի Հովհաննիսյանին Դաշնային հարկային ծառայությունում հաշվառման կանգնեցնելու վերաբերյալ, թվով երեք լուսանկարներ): 2015 թվականի դեկտեմբեր ամսից մինչև վթարը՝ 2018 թվականի ապրիլ ամիսը ներառյալ ընկած ժամանակաշրջանը կուտակված փոխադրամիջոցի գույքահարկի պարտավորությունը կազմել է 383.000 (երեք հարյուր ութսուներեք հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, որը Նազարեթ Ֆայենբերգի Հովհաննիսյանը պարտավորվել է վճարել:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, Հարկային օրենսգրքի 245-րդ հոդվածի 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունիսի 22-ի N 822-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետի 2-րդ ենթակետի, 8-րդ, 9-րդ կետերի դրույթներով և հիմք ընդունելով Նազարեթ Ֆայենբերգի Հովհաննիսյանի (հաշվառված՝ քաղաք Գյումրի Շիրվանզադե փողոց տուն 54 հասցեում, անձնագիր N AV0660148, տրված՝ 2023 թվականի մարտի 02-ին, ոստիկանության 065-ի կողմից, սոցիալական ապահովության քարտ՝ 2405690365) դիմումը (համանքապետարանում մուտքագրված 2025թվականի հոկտեմբերի 31-ին N 16827 թվագրմամբ)՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1.Սահմանել արտոնություն Նազարեթ Ֆայենբերգի Հովհաննիսյանին սեփականության իրավունքով պատկանող տրանսպորտային միջոցի գույքահարկի 2018 թվականի մայիս ամսից մինչև

2025 թվականի դեկտեմբեր ամիսը ներառյալ ընկած ժամանակաշրջանի մայր գումարների և տույժերի վճարումների նկատմամբ՝ ազատելով գույքահարկի ընդամենը 1.630.668 (մեկ միլիոն վեց հարյուր երեսուն հազար վեց հարյուր վաթսունութ) Հայաստանի Հանրապետության դրամ գումարի վճարումից, որից մայր գումարը 2018 թվականի մայիս ամսից մինչև 2020 թվականի դեկտեմբեր ամիսը ներառյալ ընկած ժամանակաշրջանի համար կազմում է 440.000 (չորս հարյուր քառասուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, տույժը՝ 156.200 (մեկ հարյուր հիսունվեց հազար երկու հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ, իսկ 2021 թվականի հունվար ամսից մինչև 2025 թվականի դեկտեմբեր ամիսը ներառյալ ընկած ժամանակաշրջանի համար մայր գումարը կազմում է 819.768 (ութ հարյուր տասնինը հազար յոթ հարյուր վաթսունութ) Հայաստանի Հանրապետության դրամ, տույժը՝ 214.700 (երկու հարյուր տասնչորս հազար յոթ հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ, ընդամենը մայր գումարը կազմում է 1.259.768 (մեկ միլիոն երկու հարյուր հիսունինը հազար յոթ հարյուր վաթսունութ) Հայաստանի Հանրապետության դրամ, տույժը՝ 370.900 (երեք հարյուր յոթանասուն հազար ինը հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ:

2.Սույն որոշումն ուժի մեջ է Նազարեթ Ֆայենբերգի Հովհաննիսյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

***Քվեարկության արդյունքները.***

Կողմ -26 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Լ. ԱՆԱՆՅԱՆ
Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Կ. ԼԱԼԱԶԱՐՅԱՆ
Ս. ԷԼԲԱԿՅԱՆ
Ս. ՄԵԼԻՔՅԱՆ
Է. ԲԱՐՍԵՂՅԱՆ
Լ. ԱՆԱՆՅԱՆ
Շ. ԱՐԱՄՅԱՆ
Ք. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Հ. ՄԱՆՈՒԿՅԱՆ
Է. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Գ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Ն. ԲԵԳՁԱԴՅԱՆ
Վ. ԴԱՎԹՅԱՆ
Լ. ՆԱԶԱՐՅԱՆ
Ս. ԱԴԱՄՅԱՆ
Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ
Լ. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Կ. ԳՐԻԳՈՐՅԱՆ
Վ. ԵԴԻԳԱՐՅԱՆ
Ա. ՀՈՎՍԵՓՅԱՆ
Ռ. ՄԽԻԹԱՐՅԱՆ
Վ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ
Ս. ՄՈՍՈՅԱՆ
Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 171-Ա)*

---

**ԼՍԵՑԻՆ**

***17. ԹՎՈՎ ՅՈԹ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ՏՈՒՅԺԵՐԻ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ***
***(Զեկ. ՇՈՒՌԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, Հարկային օրենսգրքի 245-րդ հոդվածի 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության

կառավարության 2012 թվականի հունիսի 22-ի N 822-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետի 2-րդ ենթակետի, 8-րդ, 9-րդ կետերի դրույթներով և հիմք ընդունելով որոշման հավելվածում նշված դիմումատուների՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին ուղղված դիմումները՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1.Սահմանել արտոնություն թվով յոթ քաղաքացիներին սեփականության իրավունքով պատկանող տրանսպորտային միջոցների գույքահարկի տույժերի վճարումների նկատմամբ, ազատելով գույքահարկի տույժերի վճարումից՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

***Քվեարկության արդյունքները.***

Կողմ -26 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Լ. ԱՆԱՆՅԱՆ
Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Կ. ԼԱԼԱԶԱՐՅԱՆ
Ս. ԷԼԲԱԿՅԱՆ
Ս. ՄԵԼԻՔՅԱՆ
Է. ԲԱՐՍԵՂՅԱՆ
Լ. ԱՆԱՆՅԱՆ
Ճ. ԱՐԱՄՅԱՆ
Ք. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Հ. ՄԱՆՈՒԿՅԱՆ
Է. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Գ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Ն. ԲԵԳՋԱԴՅԱՆ
Վ. ԴԱՎԹՅԱՆ
Լ. ՆԱԶԱՐՅԱՆ
Ս. ԱԴԱՄՅԱՆ
Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ
Լ. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Կ. ԳՐԻԳՈՐՅԱՆ
Վ. ԵԴԻԳԱՐՅԱՆ
Ա. ՀՈՎՍԵՓՅԱՆ
Ռ. ՄԽԻԹԱՐՅԱՆ
Վ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ
Ս. ՄՈՍՈՅԱՆ
Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 172-Ա)*

---

**ԼՍԵՑԻՆ**

***18. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 16-Ի N98-Ա ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***
***(Զեկ. ՇՈՒՌԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ)***

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2025 թվականի սեպտեմբերի 16-ի «Թվով տասնմեկ քաղաքացիներին սեփականության իրավունքով պատկանող տրանսպորտային միջոցների գույքահարկի տույժերի վճարումների նկատմամբ արտոնություն սահմանելու մասին» N 98-Ա որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունը՝

1) հանել հավելվածի 2-րդ տողը:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

***Քվեարկության արդյունքները.***

Կողմ -26 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Լ. ԱՆԱՆՅԱՆ
Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Կ. ԼԱԼԱԶԱՐՅԱՆ
Ս. ԷԼԲԱԿՅԱՆ
Ս. ՄԵԼԻՔՅԱՆ
Է. ԲԱՐՍԵՂՅԱՆ
Լ. ԱՆԱՆՅԱՆ
Ճ. ԱՐԱՄՅԱՆ
Ք. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Հ. ՄԱՆՈՒԿՅԱՆ
Է. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Գ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Ն. ԲԵԳԶԱԴՅԱՆ
Վ. ԴԱՎԹՅԱՆ
Լ. ՆԱԶԱՐՅԱՆ
Ս. ԱԴԱՄՅԱՆ
Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ
Լ. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Կ. ԳՐԻԳՈՐՅԱՆ
Վ. ԵԴԻԳԱՐՅԱՆ
Ա. ՀՈՎՍԵՓՅԱՆ
Ռ. ՄԽԻԹԱՐՅԱՆ
Վ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ
Ս. ՄՈՍՈՅԱՆ
Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 173-Ա)*

---

**ԼՍԵՑԻՆ**

***19. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 16-Ի N124-Ա ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***
***(Զեկ. ՇՈՒՌԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ)***

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2025 թվականի հոկտեմբերի 16-ի «Թվով տասնմեկ քաղաքացիներին սեփականության իրավունքով պատկանող տրանսպորտային միջոցների գույքահարկի տույժերի վճարումների նկատմամբ արտոնություն սահմանելու մասին» N 124-Ա որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունը՝
1) հանել հավելվածի 8-րդ տողը:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

***Քվեարկության արդյունքները.***

Կողմ -26 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Լ. ԱՆԱՆՅԱՆ
Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Կ. ԼԱԼԱԶԱՐՅԱՆ
Ս. ԷԼԲԱԿՅԱՆ

Ս. ՄԵԼԻՔՅԱՆ
Է. ԲԱՐՍԵՂՅԱՆ
Լ. ԱՆԱՆՅԱՆ
Շ. ԱՐԱՄՅԱՆ
Ք. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Հ. ՄԱՆՈՒԿՅԱՆ
Է. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Գ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Ն. ԲԵԳՋԱԴՅԱՆ
Վ. ԴԱՎԹՅԱՆ
Լ. ՆԱԶԱՐՅԱՆ
Ս. ԱԴԱՄՅԱՆ
Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ
Լ. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Կ. ԳՐԻԳՈՐՅԱՆ
Վ. ԵԴԻԳԱՐՅԱՆ
Ա. ՀՈՎՍԵՓՅԱՆ
Ռ. ՄԽԻԹԱՐՅԱՆ
Վ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ
Ս. ՄՈՍՈՅԱՆ
Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 174-Ա)*

---

**LUԵՅԻՆ**

***20. 2025 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՇԽԱՐՀԻ ԵՎ ԵՎՐՈՊԱՅԻ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՎԱՔԱԿԱՆ ԹԻՄԵՐԻ ՉԵՄՊԻՈՆ ԴԱՐՁԱԾ ԵՎ ՄՐՑԱՆԱԿԱՅԻՆ ՏԵՂԵՐԻ ԱՐԺԱՆԱՑԱԾ ՄԱՐԶԻԿՆԵՐԻՆ ԵՎ ՆՐԱՆՑ ՄԱՐԶԻՉՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՊԱՐԳԵՎՆԵՐ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԼԻԼԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ)***

